**Գյումրի համայնքի ղեկավար՝**
**պր.-ն Վարդգես Սամսոնյանին**

**Գյումրի համայնքի ավագանուն**
քաղաք Գյումրի, Վարդանանց հր. 1

**Էմանուել Էմիլ Գազազից**
(Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի,
անձնագիր թիվ՝ 666398520, տրվել է՝ 2021 թ օգոստոսի 5.-ին, ժամկետը լրանալու է
2031 թ.-ին օգոստոսի 4-ին,
ծնվել է՝ 1953 թ. հունվարի 14-ին, ծննդավայրը՝ Հայաստանի Հանրապետություն,
հասցե՝ 516 Նարանջա Դրայվ, Գլենդել, Կալիֆորնիա 91206, ԱՄՆ)

# Դիմում-բողոք
# վարչական ակտն ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին

Հարգելի քաղաքապետ պարոն Սամսոնյան, և Գյումրի համայնքի ավագանու հարգելի անդամներ (Գյումրի համայնքի ավագանի),

Գյումրի համայնքի ավագանու անդամ Ա. Բաղդասարյանի կողմից ֆեյսբուք սոցիալական կայքում կատարված գրառումներից իրազեկվել եմ, որ Գյումրի քաղաքի, Ջիվանի 50 հասցեում <<ԿԱԼԳ> երիտասարդական հասարակական կազմակերպությանը ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 08. 09.2020թ. թիվ 133-Ա որոշմամբ տրամադրվել է իմ անունով թանգարան-ցուցասրահի համար տարածք և այդ վարչական ակտն անվավեր չի ճանաչվել, և ավագանու անդամը պարզաբանում է տարածքի տրամադրման գործընթացները՝ հիմք ընդունելով Գայանե Կոլյայի Կարապետյանի դիմումները: Ուշագրավ է նշել, որ <<ԿԱԼԳ> երիտասարդական հասարակական կազմակերպությանը 20 տարի ժամկետով. անհատույց օգտագործման իրավունքով, <<Էմիլ Գազազ ցուցասրահ-թանգարան>>-ի համար տարածք տրամադրելու վերաբերյալ 08. 09.2020թ. թիվ 133-Ա որոշման մեջ նշված է, որ հիմք է ընդունվել <<ԿԱԼԳ> երիտասարդական հասարակական կազմակերպության տնօրեն Գայանե Կարապետյանի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունը, այնինչ, Գայանե Կարապետյանը չի հանդիսացել և չի

հանդիսանում <<ԿԱԼԳ> երիտասարդական հասարակական կազմակերպության տնօրենը:

Հայտնում եմ, որ ես երբեք Գայանե Կոլյայի Կարապետյանին չեմ լիազորել գործ ունենալ իմ անունով թանգարան բացելու նախաձեռնությունների հետ կամ իմ անունով թանգարանի տարածք ստանալ: Ես երբևէ որևէ տեսակի հարաբերություն չեմ կառուցել <<ԿԱԼԳ>> երիտասարդական հասարակական կազմակերպության հետ, մասնավորապես, չեմ թույլատրել իմ անունով թանգարան-ցուցասրահ հիմնադրել, ստանալ տարածք, օգտագործել իմ անունը:

Ես երբեք Գայանե Կարապետյանին չեմ լիազորել լինել իմ ներկայացուցիչը: Նա իմ անունից հանդես գալու լիազորություն չի ունեցել, և ես երբեք նրան լիազորագիր չեմ տվել:

Դեռ ավելին, տիկին Գայանե Կոլյայի Կարապետյանը խախտել է իմ իրավունքները, նրա հետ ունեմ քաղաքացիա-իրավական վեճ, ինչպես նաև իմ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով հաղորդում է ներկայացվել Գայանե Կարապետյանի կողմից իմ ստեղծագործությունների ենթադրյալ հափշտակություն կատարելու փաստի առիթով:

2020 թվականի հոկտեմբերի 2-ին ոստիկանության Արաբկիրի բաժնում իմ բացառիկ ներկայացուցիչ Մոնե Հայրյան Գազազը ներկայացրել է հաղորդում՝ Գայանե Կոլյայի Կարապետյանի կողմից ենթադրյալ հանցավոր արարք կատարելու՝ իմ՝ քանդակագործ, գեղանկարիչ Էմիլ Գազազիս 41 ստեղծագործությունները հափշտակելու փաստով, որի հիման վրա 08.10.2020 թվականին հարուցվել էր թիվ 14886220 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով, որը գտնվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի վարույթում: Վարույթով որոշվել էր Գայանե Կոլյայի Կարապետյանին ներգրավել որպես մեղադրյալ: Նշված քրեական գործով քննիչը 2021 թվականի դեկտեմբերի 31-ին որոշում էր կայացրել գործի վարույթը կասեցնելու մասին, Գայանե Կարապետյանի նկատմամբ հայտարարվել էր հետախուզում, քանի որ նա խուսափելով գործի քննությունից մեկնել էր ԱՄՆ: Իմ կողմից ներկայումս բողոքարկվում է քննիչի կողմից թիվ 14886220 քրեական

գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերալ 04.02.2022 թվականին կայացված որոշումը՝ մինչդատական վերահսկողության կարգով և բողոքը ներկայումս գտնվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում:

Ես հայցադիմում եմ ներկայացրել դատարան՝ Գայանե Կարապետյանի դեմ՝ հերքում տալուն, ներողություն խնդրելուն պարտավորեցնելու պահանջներով, քանի որ Գայանե Կոլյայի Կարապետյանն իմ հանդեպ կատարել է վիրավորական արտահայտություն՝ 16.09.2020թ. https://hetq.am լրատվական կայքում <<Սկանդալ նկարիչ, քանդակագործ Էմիլ Գազազի ապագա թանգարան-ցուցասրահի շուրջ>> վերնագրով հոդվածում հրապարակայնորեն ներկայացնելով իրականությանը չհամապատասխանող և իմ պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավն արատավորող տեղեկություններ:

Իմ բացառիկ ներկայացուցիչն արդեն 16 տարի հանդիսանում է Մոնե Հայրյան Գազազը և իմ թանգարանների, ցուցասրահների հարցերով զբաղվելու իրավասություններ ունի նա:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի համաձան ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր է ճանաչվում, եթե այն ընդունվել է օրենքի խախտմամբ (այդ թվում՝ օրենքի սխալ մեկնաբանմամբ կամ կիրառմամբ), կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների կամ այնպիսի փաստաթղթերի հիման վրա, որոնց պարագայում ակնհայտ էր այլ որոշում ընդունելը:

Գայանե Կարապետյանը, ներկայացնելով կեղծ տեղեկություններ, առանց իմ համաձայնության, ապօրինի օգտագործել է իմ անունը և <<ԿԱԼԳ>> երիտասարդական հասարակական կազմակերպության համար Գյումրի քաղաքում ստացել տարածք՝ իմ անունով թանգարան-ցուցարսահ բացելու համար: Վարչական ակտն ընդունելուց պետք է ստուգվեին Գայանե Կարապետյանի կողմից տրամադրված փաստաթղթերն ու տեղեկությունները և պետք է ներկայացվեր առնվազն իմ համաձայնությունն՝ իմ անունով թանգարան-ցուցասրահի համար նշված հասարակական կազմակերպությանը տարածք տրամադրելու վերաբերյալ: Նման համաձայնություն

կամ հանձնարարություն ես երբեք ոչ Գայանե Կարապետյանին, ոչ <<ԿԱԼԳ>> երիտասարդական հասարակական կազմակերպությանը չեմ տվել:

Քանի որ իմ անունով թանգարան-ցուցասրահի համար է տարածք տրամադրվել նշված հասարակական կազմակերպությանը, ապա ես, փաստորեն, հանդիսանում եմ վարչական ակտի հասցեատեր, որի մասին ես չեմ իրազեկվել: Ես Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, որպես վարչական ակտի հասցեատեր, ունեմ ընդունված վարչական ակտը բողոքարկելու իրավունք, և իրացնելով իմ բողոքելու իրավունքը, պահանջում եմ ոչ իրավաչափ վարչական ակտը ճանաչել անվավեր: Հնարավոր է, որ <<ԿԱԼԳ>> երիտասարդական հասարակական կազմակերպությունը ևս դիմի նշված վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջով, քանի որ Գայանե Կարապետյանը չի հանդիսանում և չի հանդիսացել այդ կազմակերպության անունից քաղաքացիական շրջանառությունում հանդես գալու իրավունք ունեցող անձ, տնօրեն, ինչը ևս պետք է ստուգվեր վարչական վարույթն իրականացնող մարմնի կողմից: Նշված էպիզոդով, այսինքն <<ԿԱԼԳ> երիտասարդական հասարակական կազմակերպության անունից հանդես գալու մասով ևս Գայանե Կարապետյանի արարքին պետք է տրվի իրավական գնահատական, և նա պետք է ենթարկվի պատասխանատվության, եթե խախտել է քաղաքացիական շրջանառությունում՝ առանց օրինական հիմքերի այլ անձի անունից հանդես գալու պահանջները: Առանց իր գործողությունների իրավական հետևանքները կրելու Գայանե Կարպետյանը կարող է շարունակել օրենքով անթույլատրելի վարքագիծը և կատարել հակաօրինական, հակաիրավական և հասարակական վտանգավոր արարքներ:

**Ելնելով վերոգրյալներից, խնդրում եմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 08.09.2020թ. թիվ 133-Ա որոշումը՝ <<ԿԱԼԳ> երիտասարդական հասարակական կազմակերպությանը 20 տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով <<Էմիլ Գազազ ցուցասրահ-թանգարան>>-ի համար Գյումրի քաղաքի, Ջիվանի 50 հասցեում տարածք տրամադրելու վերաբերյալ, անվավեր ճանաչել որպես ոչ իրավաչափ վարչական ակտ: Ինչպես նաև Գայանե Կարապետյանի որպես <<ԿԱԼԳ> երիտասարդական հասարակական կազմակերպության տնօրեն ներկայանալու**

**հանգամանքին իրավական գնահատական տալու նպատակով խնդիրը բարձրացնել ՀՀ իրավապահ համակարգի առջև:**

Սույն դիմումին կցում եմ ԱՄՆ-ում Հայաստանի Հանրապետության հյուպատոսության կողմից վավերացված իմ հայտարարությունը:

Վարչական ակտն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերն ու տեղեկությունները կներկայացվեն իմ ներկայացուցիչ փաստաբան Հայկանուշ Պարսամյանի կողմից, ով կտրամադրի նաև հայտարարությանս բնօրինակը: Անհրաժեշտության դեպքում իմ ներկայացուցիչ Հայկանուշ Պարսամյանը կարող է հանդիպել վարչական մարմնի, վարչական մարմնի ներկայացուցիչների հետ, իմ պահանջի հետ կապված ներկայացնել լրացուցիչ նյութեր և տեղեկություններ:

Գյումրու համայնքի ավագանու 08. 09.2020թ. թիվ 133-Ա ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջով իմ ներկայացուցիչն է փաստաբան Հայկանուշ Պարսամյանը (փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ՝ 1519, հասցե՝ Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Մեքենագործների 3. բն,5, հեռ. 093575159):

Ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունելով՝ կատարվել է ոչ պատշաճ վարչարարություն և ինձ պատճառվել է վնաս: Խնդրում եմ հատուցել նաև ոչ պատշաճ վարչարարության արդյունքում ինձ պատճառված վնասի մի մասն՝ իմ ներկայացուցչի տրամադրած իրավական խորհրդատվության դիմաց իմ կրելիք ծախսերը, որը կազմում է 150 000 ՀՀ դրամ:

Խնդրում եմ նշված գումարը փոխանցել իմ ներկայացուցիչ փաստաբան Հայկանուշ Պարսամյանի բանկային հաշվին, որն է՝

<<Յունիբանկ>> ԲԲԸ, h/h 24106035818100:

Հարգանքներով,

Էմանուել Էմիլ Գազազ

06.07.2022թ.